

1.3. Գներ և սակագներ

Գների փոփոխությունները 2003թ. հունվար-մարտին,
ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(%-ով նախորդ ամսվա նկատմամբ)

| | Սպառողական գների ինդեքս ¹⁾ | Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾ | Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում ³⁾ | Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾ | Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքս ⁵⁾ | Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս ⁶⁾ |
|--|---------------------------------------|---|---|---|---|---|
| Հունվար | 104.1 | 97.0 ^բ | 100.0 | 99.6 | 100.2 | 100.8 |
| Փետրվար | 98.5 | 105.7 | 100.3 | 100.2 | 102.5 | 99.5 |
| Մարտ | 99.5 | 100.0 | 100.0 | 100.6 | 100.0 | 100.6 |
| 2003թ. մարտը 2002թ. դեկտեմբերի նկատմամբ | 102.1 | 101.9 ^{*)} | 100.3 | 100.4 | 103.7 ^{*)} | 100.7 ^{*)} |
| 2003թ. հունվար-մարտը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ | 103.4 | 105.2 | 100.6 | 103.4 | 105.3 | 104.6 |

*) 2003թ. մարտի և 2002թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

²⁾ Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:

³⁾ Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:


⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

⁵⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁶⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

Գների, սակագների աճի տեմպերը 2002-2003թթ. հունվար-մարտին

(%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ)



Գների միջին ամսական փոփոխությունները 2000-2003թթ. I եռամսյակում՝ ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների ու ապրանքախմբերի

(%)

| | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|---|-------|-------|--------|-------|
| Սպառողական գների ինդեքս | 100.5 | 101.2 | 100.3 | 100.7 |
| <i>այդ թվում՝</i> | | | | |
| պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) | 100.6 | 101.7 | 100.5 | 101.0 |
| ոչ պարենային ապրանքների | 100.3 | 99.7 | 99.8 | 100.1 |
| ծառայությունների | 100.1 | 100.1 | 100.1 | 100.1 |
| Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս | 100.6 | 99.5 | 100.7 | 100.6 |
| Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում | 100.1 | 99.8 | 100.3 | 100.1 |
| Բեռնափոխադրումների սակագների ինդեքս | 100.1 | 99.8 | 100.05 | 100.1 |
| Գյուղատնտեսական նթերքի իրացման գների ինդեքս | 98.9 | 100.3 | 98.4 | 101.2 |
| Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս | 98.8 | 99.8 | 99.0 | 100.2 |


Արտարժույթային շուկա: 2003թ. մարտին նախորդ ամսվա համեմատ սպառողական շուկայում գրանցված 0.5% գնանկումը ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.7% հավելաճով: Մարտին 2002թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների և հաշվարկային փոխարժեքի հավելաճը կազմել է համապատասխանաբար 2.1% և 1.0%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է նմանատիպ միտում և սպառողական գների ու հաշվարկային փոխարժեքի հավելաճը կազմել է համապատասխանաբար 0.9% և 1.1%: ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը 2003թ. մարտին կազմել է 590.38 դրամ, ինչը 3.4% գերազանցել է 2002թ. մարտի համապատասխան ցուցանիշը (571.2 դրամ):

Սպառողական գներ: 2003թ. հունվարին Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում գրանցված 4.1% գնաճին փետրվար-մարտին հաջորդել է 1.9% ընդհանուր գնանկում: Մարտին փետրվարի համեմատ սպառողական գները նվազել են 0.5%, ինչը պարենային որոշ ապրանքատեսակների գների սեզոնային փոփոխությունների արդյունք է :

2003թ. մարտին պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գնանկումը կազմել է 0.7%, ծառայությունների սակագների նվազումը՝ 0.1%, իսկ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 0.3% գնաճ:

Սպառողական գների ինդեքսը 2003թ. մարտին 2002թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 102.1%, ինչը 1.2 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (100.9%): Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 102.9%, ոչ պարենային ապրանքներինը՝ 100.4%, ծառայությունների սակագներինը՝ 100.4%:

Սպառողական գների հավելաճը 1995-2003թթ. մարտին
(%-ով, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)



2003թ. հունվար-մարտին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.7%, ինչը գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը 0.4 տոկոսային կետով (0.3%):

2003թ. մարտին 2002թ. մարտի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 103.2%, այդ թվում պարենային ապրանքների՝ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 103.5%, ոչ պարենային ապրանքների՝ 103.7%, ծառայությունների սակագների՝ 101.6%, իսկ հունվար-մարտին 2002թ. հունվար-մարտի համեմատ՝ համապատասխանաբար 103.4%, 103.8, 103.5 և 101.9%:


Սպառողական գների ինդեքսը 2002-2003թթ.

(%-ով)

| | Ընդամենը | | այդ թվում | | | | | |
|--------------------|-----------------------|----------------------------------|-----------------------|----------------------------------|------------------------|----------------------------------|-----------------------|----------------------------------|
| | նախորդ ամսվա նկատմամբ | նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ | պարենային ապրանքներ | | ոչ պարենային ապրանքներ | | ծառայություններ | |
| | | | նախորդ ամսվա նկատմամբ | նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ | նախորդ ամսվա նկատմամբ | նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ | նախորդ ամսվա նկատմամբ | նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ |
| 2002 թվական | | | | | | | | |
| Հունվար | 102.2 | 102.2 | 103.7 | 103.7 | 99.7 | 99.7 | 100.0 | 100.0 |
| Փետրվար | 99.3 | 101.5 | 99.5 | 103.2 | 99.8 | 99.5 | 100.0 | 100.0 |
| Մարտ | 99.4 | 100.9 | 99.4 | 102.6 | 100.0 | 99.4 | 100.4 | 100.4 |
| I եռամսյակ | 100.9 | 100.9 | 102.6 | 102.6 | 99.4 | 99.4 | 100.4 | 100.4 |
| Ապրիլ | 102.5 | 103.4 | 103.9 | 106.6 | 100.7 | 100.1 | 100.2 | 100.6 |
| Մայիս | 101.7 | 105.2 | 102.5 | 109.3 | 100.4 | 100.5 | 100.2 | 100.9 |
| Հունիս | 99.5 | 104.6 | 99.0 | 108.2 | 100.1 | 100.6 | 100.7 | 101.5 |
| II եռամսյակ | 103.7*) | 104.6 | 105.5*) | 108.2 | 101.2*) | 100.6 | 101.1*) | 101.5 |
| Հուլիս | 95.0 | 99.4 | 92.1 | 99.6 | 100.2 | 100.9 | 100.0 | 101.6 |
| Օգոստոս | 97.0 | 96.4 | 95.3 | 94.9 | 99.3 | 100.2 | 99.8 | 101.4 |
| Սեպտեմբեր | 99.4 | 95.8 | 99.0 | 94.0 | 100.0 | 100.1 | 99.8 | 101.1 |
| III եռամսյակ | 91.6*) | 95.8 | 86.9*) | 94.0 | 99.5*) | 100.1 | 99.6*) | 101.1 |
| Հոկտեմբեր | 100.5 | 96.3 | 100.3 | 94.3 | 101.5 | 101.7 | 100.3 | 101.4 |
| Նոյեմբեր | 102.2 | 98.4 | 103.5 | 97.6 | 100.8 | 102.5 | 100.1 | 101.5 |
| Դեկտեմբեր | 103.6 | 102.0 | 105.8 | 103.2 | 100.3 | 102.7 | 100.0 | 101.5 |
| IV եռամսյակ | 106.5*) | 102.0 | 109.8*) | 103.2 | 102.6*) | 102.7 | 100.4*) | 101.5 |
| 2003 թվական | | | | | | | | |
| Հունվար | 104.1 | 104.1 | 106.7 | 106.7 | 100.4 | 100.4 | 100.4 | 100.4 |
| Փետրվար | 98.5 | 102.5 | 97.6 | 104.2 | 99.7 | 100.1 | 100.1 | 100.5 |
| Մարտ | 99.5 | 102.1 | 99.2 | 103.3 | 100.3 | 100.4 | 99.9 | 100.4 |
| I եռամսյակ | 102.1 | 102.1 | 103.3 | 103.3 | 100.4 | 100.4 | 100.4 | 100.4 |

*) եռամսյակի վերջին ամիսը նախորդ եռամսյակի վերջին ամսվա համեմատ:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2003թ. հունվար-մարտին
(%-ով, նախորդ ամսվա համեմատ)




Պարենային ապրանքների գներ: 2003թ. հունվարին գրանցված պարենային ապրանքների 6.7% գնաճին փետրվար-մարտին հաջորդել է 3.2% ընդհանուր գնանկում: Մարտին փետրվարի համեմատ գրանցվել է պարենային ապրանքների 0.8% գնանկում, ինչը հիմնականում պայմանավորվել է ձվի և մրգի գների նվազմամբ:

2003թ. մարտին 2002թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է ձվի 21.7% գնանկում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 9.7% գնաճի դիմաց: 2003թ. հունվարին գրանցված ձվի 5.3% գնաճին փետրվար-մարտին հաջորդել է 25.6% գնանկում, ընդ որում մարտին նախորդ ամսվա համեմատ գնանկումը կազմել է 7.4%: Վերջինս պայմանավորվել է դիտարկված բոլոր քաղաքներում գրանցված ձվի 15.9-3.2% գնանկումով (նվազման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Կապանում):

Մրգի ապրանքախմբում 2003թ. մարտին 2002թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 5.9% գնաճ, ինչը 1.6 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (7.5%): 2003թ. հունվարին արձանագրված մրգի 29.7% գնաճին փետրվար-մարտին հաջորդել է 18.4% գնանկում, ընդ որում մարտին փետրվարի համեմատ մրգի գնանկումը կազմել է 5.1%: Դրան մեծապես նպաստել է տանձի, խնձորի, խաղողի, ադամաթզի 9.7-5.8% գնանկումը: Նշված ժամանակահատվածում նարնջի գնանկումը կազմել է 3.0%, իսկ կիտրոնի և մանդարինի գներն աճել են համապատասխանաբար 7.7% և 8.2%:


Մրգի գների փոփոխությունները 2001-2003թթ. հունվար-մարտին
(%-ով, նախորդ ամսվա նկատմամբ)



Հանրապետության դիտարկված 7 բնակավայրերում գրանցվել է մրգի 7.9-0.3% գնանկում (ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Վաղարշապատում), իսկ Թալին, Մարտունի և Կապան քաղաքներում՝ 1.1-3.7% գնաճ:

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2003թ. մարտին 2002թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 32.3% գնաճ, այդ թվում հունվարին գրանցվել է 38.4% գնաճ, իսկ փետրվար-մարտին՝ 4.4% գնանկում: Մարտին փետրվարի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի գնանկումը կազմել է 1.8%, ինչը հիմնականում պայմանավորվել է թարմ կանաչեղենի (11.0-17.8%), վարունգի (5.1%), լոլիկի (4.2%) գնանկումով: Նշված ժամանակահատվածում կարտոֆիլի, գլուխ սոխի, կաղամբի, ճակնդեղի, զազարի գներն աճել են 0.4-12.7%: Հանրապետությունում դիտարկված 6 քաղաքներում բանջարեղենի և կարտոֆիլի գները նվազել են 7.7-0.3% (գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Եղեգնաձորում), իսկ հետազոտվող մյուս 4 քաղաքներում գրանցվել է 2.2-6.5% գնաճ:

Բանջարեղենի գների ամսական փոփոխությունների դինամիկան 2001-2003թթ.
(%-ով, նախորդ ամսվա նկատմամբ)



2003թ.հունվարին կաթնամթերքի ապրանքախմբում գրանցված 0.6% գնաճին փետրվար-մարտին հաջորդել է 2.5% գնանկում: Մարտին կաթնամթերքի գնանկումը կազմել է 1.4%, ինչը հիմնականում մածուցի՝ 1.6% և տնական պայմաններում պատրաստված պանրի՝ 3.6% գնանկման արդյունք է: Նշված ժամանակահատվածում թարմ կաթի գինը նվազել է 1.2%:

Ձկնամթերքի ապրանքախմբում 2003թ. մարտին 2002թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 9.7% գնանկում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2.8% գնաճի դիմաց: Հունվարին գրանցված ձկնամթերքի 21.3% գնանկմանը փետրվար-մարտին հաջորդել է 14.7% գնաճ: Մարտին փետրվարի համեմատ ձկնամթերքի գնաճը կազմել է 2.5%, ինչը հիմնականում պայմանավորվել է ապխտած «սիգ» տեսակի ձկան 9.5% գնաճով: Հանրապետության դիտարկված 7 քաղաքներում գրանցվել է ձկնամթերքի 1.3-18.4% գնաճ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Վաղարշապատում), իսկ հետազոտվող մյուս 3 քաղաքներում՝ 10.8-0.9% գնանկում:

2003թ. մարտին 2002թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է մսամթերքի 2.3%, իսկ նախորդ ամսվա համեմատ՝ 0.7% գնաճ: Դրան մեծապես նպաստել է ոչխարի (4.9%), տավարի (1.9%) և խոզի (1.1%) մսի գնաճը: Հանրապետության դիտարկված 7 քաղաքներում մսամթերքի գնաճը կազմել է 0.5-5.6% (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Մարտունիում), իսկ հետազոտվող մյուս 3 քաղաքներում արձանագրվել է 1.1- 0.1% գնանկում:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(%)

| | 2003 թվականի | | | | |
|------------------------------------|-----------------|----------|-------|--------------------------------|---|
| | հունվարը 2002թ. | փետրվարը | մարտը | մարտը 2003թ. փետրվարի նկատմամբ | հունվար-մարտը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ |
| Պարենային ապրանքներ | | | | | |
| (Ուտարառելի ոգելից խմիչք և ծխախոտ) | 106.0 | 103.7 | 102.9 | 99.3 | 103.8 |
| Պարենային ապրանքներ | 106.7 | 104.2 | 103.3 | 99.2 | 104.8 |
| հացամթերք | 99.8 | 99.8 | 99.5 | 99.8 | 98.3 |
| մսամթերք | 102.5 | 101.6 | 102.3 | 100.7 | 102.5 |
| ծկնամթերք | 78.7 | 88.0 | 90.3 | 102.5 | 97.9 |
| կաթնամթերք | 100.6 | 99.5 | 98.1 | 98.6 | 98.4 |
| ծու | 105.3 | 84.5 | 78.3 | 92.6 | 98.9 |
| կենդանական և բուսական յուղ | 100.6 | 99.9 | 99.9 | 100.0 | 101.1 |
| միրգ | 129.7 | 111.5 | 105.9 | 94.9 | 134.2 |
| բանջարեղեն և կարտոֆիլ | 138.4 | 134.6 | 132.3 | 98.2 | 123.7 |
| շաքարավազ | 101.3 | 100.8 | 101.3 | 100.5 | 101.7 |
| սուրճ, թեյ, կակաո | 100.6 | 100.4 | 100.4 | 99.9 | 99.1 |
| հրուշակեղեն | 102.4 | 100.8 | 100.7 | 99.9 | 102.6 |
| այլ մթերք | 99.9 | 99.6 | 99.6 | 100.0 | 99.7 |
| ոչ ոգելից խմիչք | 100.7 | 100.8 | 101.0 | 100.2 | 102.0 |
| Ոգելից խմիչք և ծխախոտ | 100.1 | 99.5 | 99.7 | 100.2 | 95.8 |

Մի խումբ պարենային ապրանքների գների համեմատությունը տավարի մսի գնի նկատմամբ

(%)

| | Չափի միավորը | 2001թ. | 2002թ. | | 2003թ. |
|-----------------|--------------|--------|--------|-----------|--------|
| | | մարտ | մարտ | դեկտեմբեր | մարտ |
| Միս տավարի | կգ | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |
| Ձուկ | „-„ | 43.7 | 61.9 | 61.7 | 51.9 |
| Կաթ | լ | 23.5 | 24.2 | 23.0 | 23.8 |
| Պանիր «չանախ» | կգ | 118.0 | 123.6 | 110.8 | 104.9 |
| Կենդանական յուղ | „-„ | 132.5 | 139.3 | 119.7 | 113.1 |
| Բուսական յուղ | լ | 48.2 | 53.0 | 55.3 | 54.8 |
| Ձու | տասնյակ | 38.8 | 44.4 | 46.5 | 35.1 |
| Հաց I տեսակի | կգ | 18.8 | 19.2 | 17.9 | 17.0 |
| Մակարոն | „-„ | 22.9 | 23.0 | 21.7 | 20.9 |
| Վերմիշել | „-„ | 22.9 | 23.0 | 21.7 | 20.9 |
| Շաքարավազ | „-„ | 23.0 | 24.5 | 23.1 | 22.6 |
| Բրինձ | „-„ | 28.4 | 28.5 | 26.7 | 26.3 |
| Աղ | „-„ | 8.7 | 9.0 | 8.5 | 8.2 |
| Կարտոֆիլ | „-„ | 13.6 | 14.0 | 15.1 | 14.8 |
| Խնձոր | „-„ | 26.9 | 24.5 | 29.6 | 28.6 |
| Թեյ | „-„ | 286.8 | 291.4 | 269.2 | 258.8 |
| Սուրճ | „-„ | 213.7 | 223.3 | 204.5 | 198.0 |

2003թ. մարտին 2002թ. մարտի համեմատ տավարի մսի գինն աճել է 10.6%-ով, ինչն էլ, թերևս, նպաստել է տավարի մսի գնի համեմատ վերը նշված ապրանքատեսակների հիմնական մասի գների 32.5-0.4 տոկոսային կետով նվազմանը (կարտոֆիլի, բուսական յուղի և խնձորի գները նշված ժամանակահատվածում աճել են համապատասխանաբար 0.8, 1.8 և 4.0 տոկոսային կետով): Մարտին 2002թ. դեկտեմբերի համեմատ նշված ապրանքատեսակների գները տավարի մսի գնի համեմատ նվազել են 11.4-0.3 տոկոսային կետով, բացառությամբ թարմ կաթի, ինչի գինն աճել է 0.8 տոկոսային կետով:

Պարենային մի խումբ ապրանքատեսակների միջին տարեկան հանրապետական գները

(դրամ)

| | Չափի միավորը | 2002 թվական | | | | 2003 թվական | | | |
|------------------|--------------|-------------|---------|------|------------|-------------|---------|------|------------|
| | | հունվար | փետրվար | մարտ | I եռամսյակ | հունվար | փետրվար | մարտ | I եռամսյակ |
| Միս տավարի | կգ | 1095 | 1061 | 1062 | 1072 | 1167 | 1154 | 1175 | 1165 |
| Միս խոզի | „-„ | 1318 | 1255 | 1227 | 1267 | 1167 | 1129 | 1141 | 1146 |
| Կենդանական յուղ | „-„ | 1483 | 1487 | 1479 | 1483 | 1372 | 1330 | 1329 | 1344 |
| Բուսական յուղ | „-„ | 562 | 563 | 563 | 563 | 631 | 641 | 644 | 639 |
| Կաթ | լ | 259 | 258 | 257 | 258 | 284 | 282 | 280 | 282 |
| Պանիր | կգ | 1305 | 1309 | 1312 | 1309 | 1262 | 1238 | 1233 | 1244 |
| Շաքարավազ | „-„ | 260 | 260 | 260 | 260 | 265 | 264 | 265 | 265 |
| Չուր | տասնյակ | 483 | 472 | 471 | 476 | 554 | 444 | 412 | 470 |
| Հաց (I տեսակի) | կգ | 204 | 204 | 204 | 204 | 199 | 199 | 199 | 199 |
| Աղ | „-„ | 96 | 96 | 96 | 96 | 97 | 96 | 96 | 96 |
| Կարտոֆիլ | „-„ | 157 | 152 | 149 | 153 | 178 | 174 | 174 | 175 |
| Կաղամբ | „-„ | 90 | 85 | 79 | 85 | 96 | 95 | 97 | 96 |
| Գլուխ սոխ | „-„ | 184 | 173 | 165 | 174 | 239 | 214 | 218 | 224 |
| Գազար | „-„ | 129 | 108 | 98 | 112 | 125 | 126 | 142 | 131 |
| Խնձոր | „-„ | 295 | 291 | 260 | 282 | 487 | 369 | 336 | 397 |
| Թեյ | „-„ | 3110 | 3090 | 3090 | 3098 | 3046 | 3041 | 3041 | 3043 |
| Սուրճ | „-„ | 2374 | 2372 | 2370 | 2372 | 2333 | 2326 | 2326 | 2329 |


Ոչ պարենային ապրանքներ: 2003թ. մարտին 2002թ. դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 0.4 % գնաճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.6% գնանկման դիմաց:

2003թ. հունվար-մարտին արձանագրվել է բենզինի 7.4% գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցել է մարտին՝ 4.1%:

2003թ. հունվար-փետրվարին գրանցված դիզելային վառելիքի 13.2% գնաճին մարտին հաջորդել է 1.3% գնանկում: Մարտին 2002թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է դիզելային վառելիքի 11.7% գնաճ:

Մի խումբ ոչ պարենային ապրանքների գների ինդեքսները 2003թ. մարտին

(%-ով՝ նախորդ տարվա մարտի նկատմամբ)



2003թ. հունվարին վառելիքի ապրանքախմբում գրանցված 4.7% գնաճին փետրվար-մարտին հաջորդել է 7.7% ընդհանուր գնանկում, մեծապես պայմանավորված վառելափայտի 22.6% գնանկումով: Մարտին փետրվարի համեմատ վառելիքի գնանկումը կազմել է 1.8%, հիմնականում նավթի 6.4% գնանկման արդյունքում:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները

(%-ով)

| | 2003 թ վ ա կ ա մ ի | | | | |
|--|--------------------|------------------------------------|-------|--------------------------------------|--|
| | հունվարը 2002թ. | փետրվարը դեկտեմբերի նկատմամբ | մարտը | մարտը 2003թ. փետրվարի նկատմամբ | հունվար-մարտը 2002թ. հունվար- մարտի նկատմամբ |
| Ոչ պարենային ապրանքներ այդ թվում՝ | 100.4 | 100.1 | 100.4 | 100.3 | 103.5 |
| հագուստ և կտորեղեն | 100.2 | 100.0 | 100.2 | 100.2 | 103.4 |
| վառելիք | 104.7 | 98.4 | 96.6 | 98.2 | 122.9 |
| կահույք | 100.2 | 100.4 | 100.8 | 100.4 | 102.0 |
| գորգեղեն | 103.1 | 103.2 | 103.3 | 100.1 | 103.9 |
| տեքստիլեղեն | 101.5 | 101.7 | 101.8 | 100.1 | 98.8 |
| կենցաղային էլեկտրաապրանքներ | 100.1 | 98.2 | 96.4 | 98.2 | 98.6 |
| խոհանոցային սպասք | 99.9 | 100.3 | 101.5 | 101.2 | 102.0 |
| լվացամիջոցներ | 100.1 | 100.0 | 100.5 | 100.5 | 99.6 |
| շինանյութեր | 99.1 | 98.9 | 99.1 | 100.2 | 99.5 |
| այգեգործական ապրանքներ | 99.2 | 98.8 | 98.9 | 100.1 | 96.6 |
| դեղամիջոցներ | 98.9 | 98.8 | 98.5 | 99.8 | 94.7 |
| անձնական օգտագործման մեքե- նաներ և բենզին | 102.3 | 103.8 | 107.0 | 103.1 | 114.7 |
| մշակույթի ապրանքներ | 98.0 | 98.8 | 99.1 | 100.2 | 100.2 |
| գրենական պիտույքներ | 99.9 | 98.9 | 99.3 | 100.4 | 99.3 |
| զեղահարդարման ապրանքներ | 100.1 | 100.3 | 100.3 | 100.0 | 101.1 |
| ոսկերչական ապրանքներ | 107.7 | 111.7 | 116.0 | 103.8 | 119.0 |
| անձնապիտո ապրանքներ | 100.0 | 99.8 | 99.5 | 99.7 | 100.6 |

Ծառայություններ: 2003թ. մարտին 2002թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է ծառայությունների սակագների 0.4% հավելաճ, ինչը կրկնել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը:

2003թ. հունվար-փետրվարին տրանսպորտի ծառայությունների ոլորտում արձանագրված սակագների 1.6% հավելաճին մարտին հաջորդել է 0.7% նվազում: Տրանսպորտի ծառայությունների սակագների փոփոխությունները մեծապես պայմանավորվել են միջքաղաքային տրանսպորտի սակագների փոփոխություններով (հունվար-փետրվարին գրանցվել է սակագների 2.4% հավելաճ, իսկ մարտին՝ 0.8% նվազում):

Կապի ծառայությունների ոլորտում հունվար-փետրվարին գրանցված սակագների 0.9% հավելաճին մարտին հետևել է 0.3% նվազում: Նշված սակագնային փոփոխությունները հիմնականում պայմանավորվել են հանրապետությունում հեռախոսազրույցների թոպեավճարի կիրառման արդյունքում հեռախոսի անսավճարի հավելաճով (հունվարին և փետրվարին արձանագրվել է սակագների համապատասխանաբար 2.6% և 1.0% հավելաճ, իսկ մարտին՝ 1.9% նվազում):

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

(%)

| | 2003 թվականի | | | | |
|----------------------------------|----------------------------|----------|-------|--------------------------------|---|
| | հունվարը | փետրվարը | մարտը | մարտը 2003թ. փետրվարի նկատմամբ | հունվար-մարտը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ |
| | 2002թ. դեկտեմբերի նկատմամբ | | | | |
| Ծառայություններ, ընդամենը | 100.4 | 100.5 | 100.4 | 99.9 | 101.9 |
| <i>այդ թվում՝</i> | | | | | |
| կենցաղային | 99.9 | 100.0 | 100.1 | 100.1 | 100.2 |
| բնակարանային-կոմունալ | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.1 |
| բուժսպասարկման | 99.9 | 99.9 | 99.8 | 100.0 | 98.3 |
| տրանսպորտի | 101.4 | 101.6 | 101.0 | 99.3 | 102.1 |
| կապի | 100.5 | 100.9 | 100.6 | 99.7 | 113.8 |
| մշակույթի | 97.5 | 96.8 | 100.4 | 103.7 | 117.0 |
| կրթության համակարգի | 100.2 | 100.3 | 100.5 | 100.2 | 103.1 |
| հանգստի կազմակերպման | 98.1 | 98.3 | 98.6 | 100.3 | 106.2 |
| հանրային սննդի | 102.4 | 102.6 | 102.6 | 100.0 | 101.9 |
| իրավական և բանկային | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: 2003թ. մարտին փետրվարի համեմատ հանրապետությունում դիտարկված 7 քաղաքներում արձանագրվել է սպառողական գների 0.7-0.3% գնանկում (նվազման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Երևան և Եղեգնաձոր քաղաքներում), Վանաձոր և Մարտունի քաղաքներում՝ համապատասխանաբար 0.2% և 1.0% գնաճ, իսկ Դիլիջանում սպառողական գների ընդհանուր մակարդակը մնացել է անփոփոխ:

Սպառողական գների ինդեքսը 2002-2003թ. մարտին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, ըստ դիտարկվող քաղաքների

(%)

| | 2002 թվական | | | 2003 թվական | | |
|---------------------|----------------------------|--------------------------|-------------------|----------------------------|--------------------------|-------------------|
| | բնակավայրի տեսակարար կշիռը | սպառողական գների ինդեքսը | միջին ամսական աճը | բնակավայրի տեսակարար կշիռը | սպառողական գների ինդեքսը | միջին ամսական աճը |
| ԳԳ, ընդամենը | 100.0 | 100.9 | 100.3 | 100.0 | 102.1 | 100.7 |
| <i>այդ թվում՝</i> | | | | | | |
| Երևան | 57.85 | 101.1 | 100.4 | 59.54 | 101.9 | 100.6 |
| Գյումրի | 6.88 | 101.7 | 100.6 | 6.39 | 101.8 | 100.6 |
| Վանաձոր | 7.17 | 100.6 | 100.2 | 6.32 | 102.4 | 100.8 |
| Վաղարշապատ | 5.88 | 100.4 | 100.1 | 5.86 | 101.7 | 100.6 |
| Թալին | 3.11 | 99.6 | 99.8 | 2.86 | 101.8 | 100.6 |
| Դիլիջան | 3.01 | 100.5 | 100.2 | 2.86 | 102.7 | 100.9 |
| Հրազդան, Չարենցավան | 6.81 | 99.7 | 99.8 | 6.77 | 101.5 | 100.5 |
| Եղեգնաձոր | 1.20 | 101.3 | 100.4 | 1.17 | 101.2 | 100.4 |
| Մարտունի | 4.99 | 100.5 | 100.2 | 4.96 | 103.8 | 101.3 |
| Կապան | 3.10 | 100.7 | 100.2 | 3.26 | 103.8 | 101.3 |

2003թ. մարտին փետրվարի համեմատ հանրապետության դիտարկվող 8 քաղաքներում արձանագրվել է պարենային ապրանքների 1.2-0.1% գնանկում (ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են Երևան և Եղեգնաձոր քաղաքներում), իսկ Վանաձորում և Մարտունիում՝ համապատասխանաբար 0.4% և 1.7% գնաճ:

ՀՀ հետազոտվող բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները մարտի 30-ի դրությամբ

(դրամ՝ կգ-ի համար)

| | Միս տավարի | Պանիր | Կարագ | Բուսական յուղ, լիտր | Չու, տասնյակի համար | Շաքարավազ | Կարտոֆիլ | Գլուխ սոխ | Կաղամբ | Խնձոր |
|---------------------------|------------|-------|-------|---------------------|---------------------|-----------|----------|-----------|--------|-------|
| 2002թ. | | | | | | | | | | |
| ՀՀ, ընդամենը | 1080 | 1319 | 1461 | 563 | 505 | 259 | 150 | 165 | 68 | 255 |
| <i>այդ թվում՝</i> | | | | | | | | | | |
| Երևան | 1071 | 1388 | 1517 | 577 | 520 | 260 | 151 | 161 | 73 | 240 |
| Գյումրի | 1100 | 1250 | 1417 | 557 | 475 | 260 | 143 | 153 | 53 | 388 |
| Վանաձոր | 1000 | 1150 | 1383 | 535 | 470 | 251 | 143 | 150 | 45 | 285 |
| Վաղարշապատ | 1200 | 1300 | 1300 | 530 | 500 | 260 | 170 | 180 | 60 | 250 |
| Թալին | 1150 | 1200 | 1300 | 540 | 500 | 260 | 160 | 150 | 70 | 250 |
| Դիլիջան | 1100 | 1200 | 1400 | 560 | 525 | 260 | 180 | 160 | 80 | 250 |
| Հրազդան, Չարենցավան | 1100 | 1250 | 1350 | 550 | 475 | 255 | 150 | 180 | 60 | 200 |
| Եղեգնաձոր | 1100 | 1300 | 1300 | 550 | 475 | 250 | 140 | 150 | 130 | 250 |
| Մարտունի | 1000 | 1200 | 1400 | 550 | 500 | 270 | 110 | 230 | 50 | 300 |
| Կապան | 1140 | 1200 | 1620 | 563 | 440 | 264 | 160 | 170 | 92 | 234 |
| 2003թ.¹ | | | | | | | | | | |
| ՀՀ, ընդամենը | 1196 | 1218 | 1327 | 649 | 422 | 265 | 177 | 235 | 113 | 324 |
| <i>այդ թվում՝</i> | | | | | | | | | | |
| Երևան | 1200 | 1233 | 1330 | 651 | 421 | 268 | 173 | 242 | 115 | 296 |
| Գյումրի | 1150 | 1225 | 1313 | 638 | 450 | 268 | 168 | 190 | 65 | 368 |
| Վանաձոր | 1133 | 1100 | 1250 | 636 | 400 | 250 | 185 | 225 | 100 | 358 |
| Վաղարշապատ | 1300 | 1200 | 1250 | 570 | 400 | 260 | 200 | 200 | 150 | 350 |
| Թալին | 1300 | 1200 | 1400 | 680 | 400 | 265 | 200 | 200 | 130 | 350 |
| Դիլիջան | 1200 | 1200 | 1400 | 700 | 450 | 263 | 200 | 300 | 150 | 350 |
| Հրազդան, Չարենցավան | 1200 | 1250 | 1275 | 650 | 400 | 260 | 170 | 240 | 110 | 270 |
| Եղեգնաձոր | 1200 | 1300 | 1350 | 660 | 400 | 260 | 200 | 200 | 150 | 400 |
| Մարտունի | 1100 | 1200 | 1400 | 700 | 500 | 270 | 130 | 250 | 75 | 550 |
| Կապան | 1180 | 1160 | 1440 | 654 | 400 | 272 | 250 | 240 | 130 | 350 |

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2003թ. մարտի 31-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 5926 դրամ և 1.7%-ով գերազանցել նույնաժամանակահատվածի 2002թ. մարտի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (5825 դրամ):

Հանրապետությունում դիտարկված 8 քաղաքներում 2003թ. մարտին փետրվարի համեմատ գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.1-0.5% գնաճ (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Վանաձորում), իսկ Հրազդան (Չարենցավան) և Կապան քաղաքներում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Որոշ ոչ պարենային ապրանքախմբերի գների փոփոխությունները 2003թ. մարտին ըստ դիտարկվող քաղաքների

(%-ով՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)

| | Հագուստ և կտորեղեն | Կոշիկեղեն | Վառելիք | Դեղամիջոցներ | Կենցաղային էլեկտրաապրանքներ | Մշակույթի ապրանքներ | Գրենական պիտույքներ | Գեղահարդարման ապրանքներ |
|---------------------|--------------------|-----------|---------|--------------|-----------------------------|---------------------|---------------------|-------------------------|
| ՀՀ, ընդամենը | 100.2 | 99.7 | 96.6 | 98.5 | 96.4 | 99.1 | 99.3 | 100.3 |
| <i>այդ թվում՝</i> | | | | | | | | |
| Երևան | 100.4 | 99.8 | 94.0 | 98.3 | 94.2 | 98.4 | 98.9 | 100.5 |
| Գյումրի | 99.8 | 99.5 | 102.0 | 101.1 | 99.0 | 100.1 | 99.3 | 99.3 |

¹ 2003թ. նշված ապրանքատեսակների գների դիտարկումը կատարվել է մարտի 31-ին:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

| | | | | | | | | |
|------------------------|----------------------------|---------------|--------------|-------------------|--|-------------------------------|-----------------------------|-------------------------------------|
| | Հագուստ և կտորե- ղեն | Կոշկե- ղեն | Վառե- լիք | Դեղամի- ջոցներ | Կենցաղա- յին էլեկ- տրաապ- րանքներ | Մշակույ- թի ապ- րանքներ | Գրենական պիտույք- ներ | Գեղատար- արման ապրանք- ներ |
| Վանածոր | 99.0 | 100.0 | 97.5 | 98.5 | 99.4 | 100.1 | 98.5 | 102.2 |
| Վաղարշապատ | 100.3 | 99.1 | 102.2 | 98.2 | 100.9 | 103.6 | 100.0 | 98.8 |
| Թալին | 100.7 | 99.1 | 100.1 | 96.5 | 100.3 | 99.4 | 100.8 | 100.0 |
| Դիլիջան | 99.4 | 100.2 | 91.5 | 100.6 | 100.0 | 100.5 | 100.8 | 99.6 |
| Հրազդան, Չարենցավան | 99.2 | 98.7 | 101.1 | 100.6 | 100.1 | 100.0 | 99.9 | 100.1 |
| Եղեգնաձոր | 99.5 | 97.6 | 93.1 | 93.1 | 100.4 | 102.0 | 102.0 | 100.7 |
| Մարտունի | 100.5 | 100.5 | 102.9 | 98.2 | 98.7 | 98.9 | 100.7 | 98.4 |
| Կապան | 100.4 | 101.4 | 104.4 | 97.0 | 100.1 | 95.1 | 100.0 | 100.0 |

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2003թ. մարտին փետրվարի համեմատ հանրապետության դիտարկված 5 քաղաքներում գրանցվել է սակագների 0.5-0.1% նվազում, ք. Վաղարշապատում՝ 0.1% հավելաճ, իսկ մյուս հետազոտվող քաղաքներում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսները 2003թ. մարտին 2002թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկվող քաղաքների

(%)

| | Սպառողական գների ինդեքսը | այդ թվում | | | | | ծառայու- թյունների |
|---------------------|--------------------------------|---------------------------------|--|------------------------------|-----------------------------------|-------|-----------------------|
| | | սպառողա- կան ապ- րանքների | դրանցից | | | | |
| | | | պարենային ապ- րանքների (ներառ- յալ ոգելից խմիչք և ծխախոտ) | պարենային ապրանք- ների | ոչ պարե- նային ապ- րանքների | | |
| ՀՀ, ընդամենը | 102.1 | 102.4 | 102.9 | 103.3 | 100.4 | 100.4 | |
| <i>այդ թվում</i> | | | | | | | |
| Երևան | 101.9 | 102.3 | 102.7 | 103.2 | 100.3 | 100.3 | |
| Գյումրի | 101.8 | 101.6 | 101.8 | 102.0 | 100.6 | 102.8 | |
| Վանաձոր | 102.4 | 102.9 | 103.4 | 103.8 | 100.7 | 100.2 | |
| Վաղարշապատ | 101.7 | 102.1 | 102.4 | 102.4 | 100.7 | 100.0 | |
| Թալին | 101.8 | 102.2 | 102.6 | 103.0 | 100.4 | 100.2 | |
| Դիլիջան | 102.7 | 103.3 | 104.1 | 104.7 | 100.0 | 99.8 | |
| Հրազդան, Չարենցավան | 101.5 | 101.8 | 102.2 | 102.5 | 100.2 | 100.0 | |
| Եղեգնաձոր | 101.2 | 101.8 | 102.3 | 102.4 | 99.6 | 98.7 | |
| Մարտունի | 103.8 | 104.5 | 105.4 | 105.9 | 100.6 | 101.0 | |
| Կապան | 103.8 | 104.7 | 105.5 | 106.2 | 100.9 | 99.9 | |

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը: 2003թ. մարտին 2002թ. դեկտեմբերի համեմատ արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գնաճը կազմել է 1.9%, ինչը 0.1 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (2.0 %):


Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի

(%-ով, նախորդ ամսվա նկատմամբ)

| | 2003 թ վ ա կ ա ն ի | | | | 2002թ. հունվար- մարտը 2001թ. հունվար-մարտի նկատմամբ |
|----------------------------|--------------------|---------|-------|--|--|
| | հունվար | փետրվար | մարտ | հունվար-մարտը 2002թ. հունվար- մարտի նկատմամբ | |
| Ամբողջ արդյունաբերությունը | 97.0 | 105.7 | 100.0 | 105.2 | 101.5 |

| | 2003 թվականի | | | | 2002թ. հունվար-մարտի 2001թ. հունվար-մարտի նկատմամբ |
|---|--------------|---------|-------|---|--|
| | հունվար | փետրվար | մարտ | հունվար-մարտի 2002թ. հունվար-մարտի նկատմամբ | |
| <i>այդ թվում</i> | | | | | |
| էլեկտրաէներգետիկա | 99.7 | 97.7 | 98.7 | 100.1 | 102.0 |
| գունավոր մետալուրգիա | 104.6 | 109.0 | 108.4 | 132.5 | 108.0 |
| քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն | 97.8 | 95.2 | 100.6 | 115.8 | 84.5 |
| մեքենաշինություն | 97.6 | 94.9 | 102.6 | 92.5 | 96.3 |
| այլ արդյունաբերական արտադրություն | 64.1 | 176.2 | 83.7 | 106.8 | 96.6 |
| (ոսկերչական արդյունաբերություն) անտառային, փայտամշակման, թղթի-ցելյուլոզի արդյունաբերություն | 66.0 | 114.2 | 102.7 | 118.1 | 107.6 |
| շինանյութերի արդյունաբերություն | 95.3 | 98.0 | 100.2 | 101.5 | 95.5 |
| թեթև արդյունաբերություն | 110.6 | 91.7 | 109.7 | 92.1 | 97.9 |
| սննդի (ներառյալ ալյուրի ու հա մակցված կերերի) արդյունաբերություն | 101.6 | 100.6 | 99.2 | 98.6 | 100.6 |
| հրատարակչական գործերի արտադրություն | 85.5 | 103.7 | 102.7 | 104.0 | 105.5 |

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսներն ըստ արդյունաբերության ճյուղերի (մարտը նախորդ տարվա մարտի նկատմամբ`%-ով)




- 1-էլեկտրաէներգիա
- 2-Գունավոր մետալուրգիա
- 3-Քիմիական և նավթաքիմիական արդյունաբերություն
- 4-Մեքենաշինություն
- 5-Այլ արդյունաբերական արտադրություն
- 6-Անտառային, փայտամշակման, թղթի-ցելյուլոզի արդյունաբերություն
- 7-Շինանյութերի արդյունաբերություն
- 8-Թեթև արդյունաբերություն
- 9-Սննդի արդյունաբերություն
- 10-Հրատարակչական գործերի արտադրություն

Բեռնափոխադրումների սակագների ինդեքս: 2003թ. մարտին 2002թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է տրանսպորտի բոլոր տեսակներով բեռնափոխադրումների սակագների 0.4% հավելաճ, ինչը 0.3 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (0.1%): Նշված ժամանակահատվածում երկաթուղային, խողովակաշարային և ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների

հավելաճը կազմել է համապատասխանաբար 0.3%, 0.3 և 3.6%, իսկ օդային տրանսպորտում պահպանվել է սակագների նախորդ տարա դեկտեմբերի մակարդակը:

Տրանսպորտի բոլոր տեսակներով բեռնափոխադրումների սակագների ինդեքսները մարտին
(%-ով՝ նախորդ տարվա մարտի նկատմամբ)



Տրանս

պորտի բոլոր տեսակներով բեռնափոխադրումների սակագների փոփոխությունները

(%-ով՝ նախորդ ամսվա նկատմամբ)

| | Բեռնափոխադրումների սակագների ինդեքս, ընդամենը | այդ թվում | | | |
|---------------|---|--------------------------|---------------------------|--------------------|-----------------------------|
| | | երկաթուղային տրանսպորտով | ավտոմոբիլային տրանսպորտով | օդային տրանսպորտով | խողովակաշարային տրանսպորտով |
| 2002թ. | | | | | |
| Հունվար | 99.5 | 99.4 | 98.2 | 100.0 | 99.6 |
| Փետրվար | 100.1 | 100.4 | 99.8 | 100.0 | 100.1 |
| Մարտ | 100.5 | 100.7 | 101.1 | 100.2 | 100.5 |
| Ապրիլ | 101.2 | 101.5 | 100.5 | 100.1 | 101.3 |
| Մայիս | 100.8 | 100.5 | 100.0 | 100.0 | 100.9 |
| Հունիս | 100.3 | 100.4 | 99.8 | 100.0 | 100.4 |
| Հուլիս | 99.6 | 98.8 | 100.2 | 100.6 | 99.6 |
| Օգոստոս | 97.0 | 96.7 | 100.7 | 99.1 | 96.9 |
| Սեպտեմբեր | 99.5 | 100.0 | 99.9 | 100.0 | 99.4 |
| Հոկտեմբեր | 103.7 | 104.3 | 100.0 | 99.9 | 103.8 |
| Նոյեմբեր | 100.5 | 100.5 | 99.8 | 99.8 | 100.6 |
| Դեկտեմբեր | 100.5 | 100.7 | 100.1 | 100.0 | 100.6 |
| 2003թ. | | | | | |
| Հունվար | 99.6 | 99.8 | 103.8 | 100.0 | 99.4 |
| Փետրվար | 100.2 | 99.9 | 100.4 | 100.0 | 100.3 |


| | Բեռնափոխադրումների սակագների ինդեքս, ընդամենը | այդ թվում | | | |
|---|---|--------------------------|---------------------------|--------------------|-----------------------------|
| | | երկաթուղային տրանսպորտով | ավտոմոբիլային տրանսպորտով | օդային տրանսպորտով | խողովակաշարային տրանսպորտով |
| Մարտ | 100.6 | 100.5 | 99.4 | 100.0 | 100.6 |
| հունվար-մարտը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ | 103.4 | 103.7 | 105.5 | 99.7 | 103.5 |

Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսները: 2003թ. մարտին 2002թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է գյուղատնտեսական մթերքի 3.7% իրացման գնաճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 4.8% գնանկման դիմաց:

2003թ. մարտին փետրվարի համեմատ գրանցվել է գյուղատնտեսական մթերքի իրացման գների հարաբերականորեն կայուն մակարդակ, ընդ որում, մթերող կազակերպություններին և անհատ քաղաքացիներին իրացված գյուղատնտեսական մթերքի գները նվազել են համապատասխանաբար 4.0% և 0.5%, իսկ շուկայում արձանագրվել է 3.2% գնաճ:

2003թ. մարտին նախորդ ամսվա համեմատ հանրապետությունում բուսաբուծական մթերքի իրացման գները նվազել են 2.1%, ինչը մեծապես պայմանավորվել է մեղրի՝ 9.9%, բանջարեղենի՝ 4.7%, տեխնիկական մշակաբույսերի՝ 2.6% գնանկումով:

Գյուղմթերքի իրացման գների ինդեքսները ՀՀ մարզերում 2003թ. մարտին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի
(նախորդ ամիսը = 100, 0)



2003թ. մարտին շարունակվել է նախորդ երկու ամիսներին հանրապետությունում արձանագրված անասնապահական մթերքի իրացման գնաճի միտումը և գնաճը կազմել է 1.1%, ինչը հիմնականում պայմանավորվել է մսամթերքի (3.5%), բրդի (19.8%) գնաճով: Նշված ժամանակահատվածում կաշվեհումքի գնաճը կազմել է 1.2%, իսկ ձվի և կաթնամթերքի ապրանքախմբերում գրանցվել է, համապատասխանաբար, 4.5% և 2.3% գնանկում:

Գյուղատնտեսական մթերքի իրացման միջին գները ՀՀ-ում 1998-2003թթ. մարտին
(դրամ)

| | Չափի միավորը | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|----------|--------------|------|------|------|------|------|------|
| Ցորեն | կգ | 140 | 103 | 100 | 110 | 101 | 93 |
| Գարի | - „- | 137 | 110 | 76 | 87 | 98 | 89 |
| Լոբի | - „- | 235 | 330 | 320 | 360 | 326 | 405 |
| Կարտոֆիլ | - „- | 131 | 103 | 81 | 109 | 112 | 145 |
| Կաղամբ | - „- | 73 | 59 | 23 | 88 | 37 | 59 |

1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

| | Չափի միավորը | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|------------------|--------------|------|------|------|------|------|------|
| Գազար | - „,- | 93 | 45 | 41 | 44 | 66 | 50 |
| Գլուխ սոխ | - „,- | 187 | 115 | 87 | 216 | 105 | 152 |
| Խնձոր | - „,- | 169 | 140 | 98 | 142 | 130 | 171 |
| Տանձ | - „,- | 247 | ... | 107 | 107 | 159 | 226 |
| Խաղող | - „,- | 300 | 200 | 200 | 200 | ... | ... |
| Ընկույզ (կեղևով) | - „,- | 657 | 500 | 712 | 621 | 764 | 831 |
| Մեղր | - „,- | 2250 | 2279 | 2371 | 2455 | 2775 | 2246 |
| Միս տավարի | - „,- | 854 | 824 | 817 | 837 | 879 | 928 |
| ոչխարի | - „,- | 812 | 726 | 858 | 849 | 877 | 957 |
| խոզի | - „,- | 1347 | 796 | 860 | 1135 | 964 | 870 |
| Կաթ | Լ | 149 | 113 | 114 | 107 | 106 | 108 |
| Մածուց | - „,- | 175 | 183 | 171 | 173 | 183 | 175 |
| Պանիր (յուղոտ) | կգ | 975 | 876 | 865 | 848 | 789 | 806 |
| Չու | հատ | 54 | 46 | 42 | 43 | 46 | 44 |
| Միամյա խոտեր | կգ | 32 | 24 | 19 | 29 | 20 | 23 |
| Բազմամյա խոտեր | - „,- | 36 | 22 | 22 | 34 | 29 | 27 |

2003թ. մարտին 2002թ. մարտի համեմատ գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը կազմել է 106.2%, այդ թվում բուսաբուծական մթերքինը՝ 110.3%, անասնապահական մթերքինը՝ 104.2%, իսկ հունվար-մարտին 2002թ. հունվար-մարտի համեմատ՝ համապատասխանաբար, 105.3%, 110.7 և 102.1%:

Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը ՀՀ-ում, ըստ մարզերի

(%)

| | 2003 թ վ ա կ ա ն ի | | | 2002թ. հունվար-մարտը 2001թ. հունվար-մարտի նկատմամբ |
|---------------------|----------------------------|--------------------------|--|--|
| | մարտը | | հունվար- մարտը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ | |
| | 2002թ. դեկտեմբերի նկատմամբ | 2003թ. փետրվարի նկատմամբ | | |
| ՀՀ, ընդամենը | 103.7 | 100.0 | 105.3 | 99.5 |
| <i>այդ թվում՝</i> | | | | |
| Արագածոտն | 108.9 | 100.7 | 106.2 | 102.3 |
| Արարատ | 95.0 | 97.6 | 101.0 | 110.4 |
| Արմավիր | 106.4 | 99.6 | 102.0 | 109.0 |
| Գեղարքունիք | 104.9 | 102.5 | 110.3 | 96.8 |
| Լոռի | 108.4 | 98.6 | 104.6 | 105.9 |
| Կոտայք | 102.5 | 100.2 | 107.1 | 98.3 |
| Շիրակ | 96.9 | 102.0 | 101.2 | 94.5 |
| Սյունիք | 107.7 | 99.7 | 108.6 | 92.1 |
| Վայոց ձոր | 114.0 | 97.6 | 104.0 | 102.6 |
| Տավուշ | 123.6 | 103.6 | 94.8 | 100.2 |

2003թ. մարտին փետրվարի նկատմամբ արձանագրված գյուղատնտեսության արտադրության միջոցների 0.6% գնման գնաճը պայմանավորվել է սերմացուների ու տնկիների (20.1%), մեքենասարքավորումների և պահեստամասերի (11.5%), պարարտանյութերի (0.7%) գնման գնաճով: Նշված ժամանակահատվածում էներգիայի և քսայուղերի, բույսերի պաշտպանության միջոցների գնման գնաճը կազմել է համապատասխանաբար 0.2% և 0.3%: Անասունների, գյուղատնտեսական վճարովի ծառայությունների, անասնակերի, գյուղատնտեսական մանր գործիքների ապրանքախմբերում գրանցվել է գնման գների և սակագների 22.2-2.0% նվազում, իսկ շինանյութերի գնման գները մնացել են նախորդ ամսվա գների նակարդակին:

Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը ՀՀ-ում, ըստ մարզերի

(%)

| | 2003 թ վ ա կ ա մ ի | | | 2002թ. հունվար-մարտը 2001թ. հունվար-մարտի նկատմամբ |
|---------------------|----------------------------|--------------------------|---|--|
| | մարտը | | հունվար-մարտը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ | |
| | 2002թ. դեկտեմբերի նկատմամբ | 2003թ. փետրվարի նկատմամբ | | |
| ՀՀ, ընդամենը | 100.7 | 100.6 | 104.6 | 100.6 |
| <i>այդ թվում՝</i> | | | | |
| Արագածոտն | 102.0 | 98.6 | 105.7 | 100.0 |
| Արարատ | 100.1 | 99.8 | 103.5 | 96.8 |
| Արմավիր | 96.7 | 103.6 | 103.9 | 100.0 |
| Գեղարքունիք | 103.0 | 100.1 | 105.6 | 100.7 |
| Լոռի | 99.8 | 100.8 | 104.3 | 103.4 |
| Կոտայք | 99.9 | 100.0 | 104.4 | 98.9 |
| Շիրակ | 98.6 | 97.9 | 101.5 | 100.5 |
| Սյունիք | 100.1 | 100.4 | 106.0 | 101.0 |
| Վայոց ձոր | 103.1 | 100.5 | 104.8 | 100.0 |
| Տավուշ | 104.2 | 100.1 | 103.2 | 100.5 |

Արտաքին առևտրի գների ինդեքսները

Ներմուծման և արտահանման միջին գների (միջին արժեքի) ինդեքսները ՀՀ արտաքին առևտրում (առանց մարդասիրական օգնության) 2003թ. I եռամսյակում նախորդ տարվա նկատմամբ

(%)

| | Ընդամենը, ըստ երկրների | այդ թվում՝ | |
|------------|------------------------|------------------|------------------|
| | | ըստ ԱՊՀ երկրների | ըստ այլ երկրների |
| Ներմուծում | 91.1 | 103.3 | 85.3 |
| Արտահանում | 103.0 | 100.6 | 103.5 |

Ներմուծման և արտահանման միջին գների փոփոխությունները ՀՀ արտաքին առևտրում (առանց հումանիտար օգնության), եռամսյակներով

(1997թ. =100.0)

